ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 25-ԱՄՅԱԿԻՆ

2017 թվականի հունվարին ակադեմիան նշում է ստեղծման 25-ամյա տարեդարձը: Այդ կապակցությամբ ակադեմիայում 2017 թվականի հունվարի 30-31-ը տեղի կունենա միջազգային գիտաժողով հետևյալ սեկցիաներում.

1. կառավարում և տնտեսագիտություն.
2. տեխնոլոգիաներ.
3. գիտամեթոդական հիմնախնդիրներ:

Գիտաժողովը նպատակաուղղված է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտի զարգացման հեռանկարներին, ճառագայթային, քիմիական, կենսաբանական պաշտպանության հարցերով բնակչության զանգվածային ուսուցմանը, բնակչության շրջանում անվտանգության մշակույթի ձևավորմանը, ինչպես նաև ճգնաժամային կառավարման հիմնախնդիրներին:

Գիտական նստաշրջանին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը մինչև 2016 թվականի օգոստոսի 15-ը և ուղարկել ակադեմիայի էլեկտրոնային փոստի հասցեին՝ info@cmsa-academy.com.

Ներկայացվելիք զեկուցման ամբողջական տարբերակն անհրաժեշտ է մինչև սեպտեմբերի 5-ը էլեկտրոնային տարբերակով, սկանավորված երաշխավորագրի հետ ուղարկել ակադեմիայի էլեկտրոնային փոստի հասցեին՝ info@cmsa-academy.com, կամ ներկայացնել ակադեմիա (Երևան-40, Աճառյան 1, 2-րդ հարկ, 217 սենյակ, հեռախոս՝ 060-69-10-01, 060-69-10-03):

Գիտական նստաշրջանին ներկայացված զեկուցումները կտպագրվեն ակադեմիայի «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուի հոբելյանական համարում:

Չափորոշիչներին չհամապատասխանող զեկուցումները չեն ընդունվելու:

Խմբագրական խորհուրդ
Հեռ. 060-69-10-01, 060-69-10-03,
info@cmsa-academy.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Հեղինակի անունը, ազգանունը և հայրանունը	
Գիտական աստիճանը/կոչումը	
Հոդվածի վերնագիրը	
Հրատարակության ներկայացվող կազմակերպությունը, ամբիոնը (բուհ, ֆակուլտետ)	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Հեռախոսահամար (բջջային)	

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2016 թ.սեպտեմբերի 5-ն է:

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդվածները կարելի է ներկայացնել հայերենով, ռուսերենով և այլ օտար լեզվով: Տեքստի տառատեսակը՝ յունիկոդ, տեքստի տառաչափը՝ 11, տողերի հեռավորությունը՝ 1.2, էջի ֆորմատը՝ A4 (210x297 մմ), աշխատանքային դաշտը՝ 165 x252 մմ, լուսանցքները. ձախից՝ 25 մմ, վերևից 20 մմ, աջից 15 մմ, ներքևից՝ 25 մմ:

Առաջին էջի վերին տողի մեջտեղում տրվում է հեղինակի (ների) Ա.Հ. Ազգանունը (ները) (փոքրատառ, bold, 11 տառաչափով): Մեկ տող ներքև, տողի մեջտեղում տրվում է հոդվածի վերնագիրը (գլխատառերով, bold, 12 տառաչափով), իսկ մեկ տող ներքև, հոդվածի տեքստի լեզվով՝ համառոտագիրը (аннотация), (որի մեջ պետք է ձևակերպվի հոդվածի նպատակը, արդյունքները և հիմնավորվի կատարված աշխատանքների անհրաժեշտությունը), 5-8 առանցքային բառերով (բոլորը՝ մինչև 10 տող ծավալով, շեղատառերով (*Italic*), 10 տառաչափով): Համառոտագրից մեկ տող ներքև, 11 տառաչափով տրվում է հոդվածի հիմնական տեքստը: Պարբերությունները սկսվում են նոր տողից՝ 10 մմ ներսից:

Նկարները և աղյուսակները տեղադրվում են տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո, նույն կամ հաջորդ էջում և պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում: Անվանումը և բացատրությունները տեղակայել նկարների տակը և աղյուսակների վրա (*Italic*, 9 տառաչափով):

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տրվում են Microsoft Equation, Italic, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները նաև համարակալվում են նույն տողի աջ անկյունում՝ (փակագծերի մեջ):

Հոդվածում օգտագործվող գրական աղբյուրները պետք է ունենան օգտագործման հերթականությանը համապատասխան համարակալում և տեքստում նշվեն՝ [1], [2],...տեսքով:

Հոդվածի վերջնամասից երկու տող ներքև, մեջտեղում նշվում է Գրականություն արտահայտությունը (փոքրատառ, bold, 11 տառաչափով) և ըստ ընդունված ստանդարտի, 10 տառաչափով տրվում է գրականության ցանկը, որում հեղինակի (ների) Ազգանունը Ա.Հ.-ն կամ առաջին բառը ձևավորվում է bold-ով: Ցանկալի է գրականության ցանկում ընդգրկել մինչև 10 հրատարակում:

Գրականությունից հետո, երկու տող ներքև հոդվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով նույն ձևով կրկնվում է հոդվածի գլխամասը՝ հեղինակի (ների) Ա.Հ. Ազգանունը (ները), հոդվածի վերնագիրը և համառոտագիրը:

Մեկ տող ներքև տրվում են հոդվածի հեղինակի Ազգանունը, Անունը, Հայրանունը, գիտ. աստիճանը, գիտ. կոչումը, կազմակերպության համառոտ անվանումը (փակագծերում) և հեռախոսների համարները:

Հոդվածի ընդհանուր ծավալը մինչև 10 էջ (ցանկալի է վերջին էջն օգտագործել ամբողջությամբ):

Չի թույլատրվում ներկայացնել նախկինում հրատարակված կամ տպագրության համար այլ հանդեսներ ուղարկած հոդվածներ:

Խորհրդի կողմից հրատարակման չերաշխավորելու դեպքում հոդվածը մնում է խմբագրությունում:

Խմբագրական խորհուրդ
Հեռ. 060-69-10-01, 060-69-10-03,

info@cmsa-academy.com